Հարգելի գործընկերներ, հյուրեր, տիկնայք և պարոնայք...

Ողջունում եմ Ձեզ աշխատաժողովի մեկնարկի կապակցությամբ և մաղթում բեղմնավոր աշխատանք բոլորիս:

Ինչպես գիտեք Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի ստորագրման գործընթացը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից մեկնարկել է 2000թ. հոկտեմբերի 20-ին, Ֆլորենցիայում՝ լանդշաֆտի պահպանությանը, կառավարմանը և պլանավորմանը նպաստելու, ինչպես նաև այդ ոլորտում եվրոպական համագործակցությունը կազմակերպելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության կողմից այն ընդունվել է 2003 թվականի մայիսի 4-ին և ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացվել է 2004 թվականի մարտի 9-ին:

– Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի վերջին աշխատաժողովը Հայաստանում կայացել է 2016 թվականին, և այսօր ուրախությամբ պետք է ամրագրել, որ շնորհիվ մեր երկարամյա գործընկեր տիկին Մագելոն Դեժան-Պոնի՝ ով Եվրոպայի խորհրդի լանդշաֆտային կոնվենցիայի գործադիր քարտուղարն է և այսօր մեզ միացած Եվրոպայի խորհրդի ներկա մեր գործընկերների՝ տիկին Մարտա Ռոդրիգեսի, տիկին Իլեանա Կիսիլևիչի, տիկին Միրնա Սոյիչի և պարոն Տապիո Հեյկիլայի աջակցությամբ կունենանք հնարավորություն մեկնարկելու լանդշաֆտի կոնվենցիայի իրագործման նոր փուլ:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանում իրականացվել են մի շարք հետևողական քայլեր՝ ուղղված լանդշաֆտային խնդիրների բացահայտմանը, վերլուծությանը և ազգային քաղաքականության հիմքերի ստեղծմանը: Փուլային քայլերն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերով: Միջազգային համագործակցության շրջանակներում կազմակերպվել են տարածական պլանավորման և լանդշաֆտային խնդիրների քննարկմանը նվիրված սեմինարներ,

որոնք կարևոր էին մասնագետների և հասարակության ուշադրությունը բևեռելու լանդշաֆտների պահպանությանը:

Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման շրջանակներում Հայաստանում ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնցով ամրագրվել են լանդշաֆտային քաղաքականության կարևոր ուղղություններ, հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթները, լանդշաֆտային հիմնախնդիրների ներառման նպատակով լրացումներ են կատարվել քաղաքացիական ծառայության վերապատրաստման դասընթացներում, համապատասխան քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում լրացվել է Կոնվենցիայի իմացության վերաբերյալ պահանջը, սահմանվել է Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակ:

Այսօր Կառավարության վարվող քաղաքականության նպատակներից է լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման միջոցով Հայաստանում որակյալ կենսամիջավայրի պահպանումը և ստեղծումը, ապրելու համար բարենպաստ և էսթետիկական տեսանկյունից արժեքավոր բնակավայրերի ձևավորումը:

Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների շրջանակներում իրականացվում են մի շարք միջոցառումներ.

- մշակվում է և արդեն իսկ երկու հանրային քննարկման է ներկայացվել «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզու հատվածի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագիծը: Այս տարածական պլանավորման փաստաթուղթը մշակվում է Լանդշաֆտի կոնվենցիայով սահմանված հիմնական սկզբունքներին համապատասխան և համահունչ:
- Մեկնարկել են Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները, Քաղաքապետարանի կողմից նախապատրաստական

աշխատանքներ են տարվում Հրազդանի կիրճը որպես հատուկ պահպանվող գոտու կարգավիճակ սահմանող իրավական ակտի մշակման ուղղությամբ, ինչպես նաև Հանրապետության համայնքներում տարվում են ակտիվ աշխատանքեր առկա զբոսայգիների արդիականացման, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերում նոր կանաչպատ տարածքների հիմնման ուղղությամբ:

- ՀՀ Կառավարության հանձնարարությամբ Քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ մեկնարկել են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ուղղված աշխատանքները: Այս ծրագրային փաստաթղթերում անդրադարձ է կատարվում լանդշաֆտների բոլոր տեսակների նույնականացմանն ու պլանավորմանը: Փաստաթղթերը հանդիսանում են բնակավայրերի համար զարգացման ուղեցույց՝ կանոնակարգելով բնական և անտրոպոգեն լանդշաֆտների կազմավորման օրինաչափությունները՝ ապահովելու դրանց հավասարակշռված, համաչափ և կայուն զարգացումը:

ՀՀ Կառավարության 2021-2026թ.թ. միջոցառոքմների ծրագրով պետք է կառուցվի 300 դպրոց և 500 մանկապարտեզ: Այդ ծրագրերը պետք է իրականացվեն համալիր կերպով՝ կրթական,շենքային,գույքային բոլոր պահանջներին համապատասխան և որ շատ կարևոր է նաև ներդաշնակ իրենց միջավայրին (լանդշաֆտին):

Կցանկանայի նաև նշել, որ նախորդող տարվա ընթացքում միջազգային գործընկերների հետ սերտ աշխատանքի շնորհիվ հայերեն է թարգմանվել և արդեն իսկ հրատարակվել է ''Բնապահպանական կրթական գործունեություններ տարրական դպրոցների համար'' մանկավարժական գրքույկը,որի առիթով իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր գործընկերներին և առանձնապես տիկին Մագելոն Դեժան-Պոնին:

Եվս մեկ անգամ ողջունում եմ աշխատաժողովի բոլոր մասնակիցներին և մաղթում եմ արգասաբեր և արդյունավետ աշխատանք:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ